

«Բեյզ Մեթրլս» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Քեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Բեյզ Սեթթլս» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բեյզ Սեթթլս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը


Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն


Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:


Լևոնյու Բոքաշել
Տնօրեն

KPMG Armenia ysc

«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
25 հուլիսի 2012թ.




Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

հազ. դրամ	Ծնթգ.	2011թ.	2010թ.	1 հունվարի 2010թ.
Ակտիվներ				
Հիմնական միջոցներ	14	14,156,567	10,343,720	8,919,017
Ներդրումային գույք		641,180	-	-
Ոչ նյութական ակտիվներ		85,654	57,324	53,672
Հետախուզման և գնահատման ակտիվներ	15	2,845,252	1,442,473	708,544
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		227,717	674,222	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	16	106,145	106,145	106,145
Ներդրումներ դուստր կազմակերպությունում		28,927	28,927	28,927
Տրված փոխառություններ	19	26,848,805	8,503,232	6,258,676
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		44,940,247	21,156,043	16,074,981
Պաշարներ	18	3,540,740	2,469,350	2,255,944
Տրված փոխառություններ	19	2,328,850	6,071,780	1,319,026
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	20	470,690	2,610,698	1,548,489
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով		540,490	1,106,612	158,129
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21	65,310	24,997	28,909
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		6,946,080	12,283,437	5,310,497
Ընդամենը ակտիվներ		51,886,327	33,439,480	21,385,478
Սեփական կապիտալ	22			
Բաժնետիրական կապիտալ		358,500	358,500	358,500
Չբաշխված շահույթ		25,851,443	17,528,893	7,805,424
Ընդամենը սեփական կապիտալ		26,209,943	17,887,393	8,163,924
Պարտավորություններ				
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	32,155	49,239	65,363
Վարկեր և փոխառություններ	23	1,539,675	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,571,830	49,239	65,363
Վարկեր և փոխառություններ	23	16,716,633	10,774,259	10,315,796
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	24	4,762,285	1,968,125	1,463,691
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարվելիք գումարներ		248,165	248,165	248,165
Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին վճարվելիք գումարներ	22	2,146,220	2,026,720	1,032,480
Շահութահարկի գծով պարտավորություն		231,251	485,579	96,059
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		24,104,554	15,502,848	13,156,191
Ընդամենը պարտավորություններ		25,676,384	15,552,087	13,221,554
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		51,886,327	33,439,480	21,385,478

«Բեյզ Սերբիա» ՓԲԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնրգ.	2011թ.	2010թ.
Հասույթ	6	17,480,461	19,482,754
Վաճառքի ինքնարժեք	7	(6,553,641)	(6,441,527)
Հանախառն շահույթ		10,926,820	13,041,227
Այլ եկամուտ		128,470	187,694
Իրացման ծախսեր	8	(714,823)	(724,433)
Վարչական ծախսեր	9	(662,166)	(527,049)
Նվիրատվություն սոցիալական ծրագրերին		(476,558)	(311,981)
Այլ ծախսեր	10	(963,938)	(770,496)
Գործառնական գործունեության արդյունքներ		8,237,805	10,894,962
Ֆինանսական եկամուտ	12	1,583,058	614,508
Ֆինանսական ծախսեր	12	(975,755)	(1,254,351)
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախսեր)		607,303	(639,843)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		8,845,108	10,255,119
Շահութահարկի գծով ծախս	13	(522,558)	(531,650)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		8,322,550	9,723,469

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2012թ. հունիսի 25-ին և ստորագրվել են վերջինիս ամսումից:

 Արթուր Մկրտումյան Գլխավոր տնօրեն		 Նաիրի Մուրադյան Գլխավոր հաշվապահ
--	---	---

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 52-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Բելգ Մեքըլ» ՓԲԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	358,500	7,805,424	8,163,924
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար			
Տարվա շահույթ	-	9,723,469	9,723,469
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	9,723,469	9,723,469
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	358,500	17,528,893	17,887,393
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	358,500	17,528,893	17,887,393
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար			
Տարվա շահույթ	-	8,322,550	8,322,550
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	8,322,550	8,322,550
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	358,500	25,851,443	26,209,943

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 52-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Վաճառքից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ	25,020,959	21,971,157
Վճարումներ մատակարարներին	(5,165,818)	(4,563,757)
Վճարումներ աշխատակիցներին	(2,469,582)	(2,315,724)
Վճարումներ շահութահարկի գծով	(793,970)	(158,254)
Վճարումներ հարկերի գծով, բացառությամբ շահութահարկի	(4,224,163)	(4,021,307)
Նվիրատվություն սոցիալական ծրագրերին	(438,005)	(169,880)
Այլ վճարումներ	(139,686)	(153,355)
Դրամական միջոցներ գործառնական գործունեությունից	11,789,735	10,588,880
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(3,965,075)	(3,718,775)
Հետախուզման և գնահատման ակտիվների ձեռքբերում	(1,415,699)	(844,267)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-	(6,869)
Հիմնական միջոցների օտարում	7,879	1,779
Տրված փոխառություններ	(18,581,288)	(7,902,729)
Տրված փոխառությունների մարում	5,384,801	952,455
Ստացված տոկոսներ	286,979	366,571
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	(18,282,403)	(11,151,835)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Հոսքեր վարկերից և փոխառություններից	10,313,611	803,700
Վարկերի և փոխառությունների մարում	(3,607,814)	(17,100)
Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին վճարված շահաբաժիններ	-	(200,760)
Վճարված տոկոսներ	(186,630)	(37,664)
Զուտ դրամական միջոցներ ֆինանսավորման գործունեությունից	6,519,167	548,176
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	26,499	(14,779)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	24,997	28,909
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	13,814	10,867
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (ծնթգ. 21)	65,310	24,997

Ծանոթագրություն	Էջ	Ծանոթագրություն	Էջ
1. Ներածություն	10	17. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ	33
2. Պատրաստման հիմունքներ	11	18. Պաշարներ	33
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	13	19. Տրված փոխառություններ	34
4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	25	20. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	35
5. Իրական արժեքի որոշում	26	21. Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35
6. Հասույթ	27	22. Կապիտալ և պահուստներ	35
7. Վաճառքի ինքնարժեք	27	23. Վարկեր և փոխառություններ	37
8. Իրացման ծախսեր	27	24. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	38
9. Վարչական ծախսեր	28	25. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում	38
10. Այլ ծախսեր	28	26. Կապիտալ պարտավորվածություններ	46
11. Աշխատակազմի գծով ծախսեր	28	27. Պայմանական դեպքեր	46
12. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր	29	28. Գործառնական ռիսկեր	48
13. Շահութահարկի գծով ծախս	29	29. Գործարքներ կապակցված կողմերի հետ	50
14. Հիմնական միջոցներ	30	30. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր	52
15. Հետախուզման և գնահատման ակտիվներ	32		
16. Վաճառքի համար մատչելի ներդրումներ	32		

1. Ներածություն

(ա) Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, որը պատերազմական գործողություններ է վարել Ադրբեջանի հետ 1990-1994թթ. և այժմ գտնվում է զինադադարի վիճակում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ն («Ընկերություն») հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման: «Բեյզ Մեթրլս Կո.» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2002թ. հուլիսին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համաձայն, որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: 2006թ. սեպտեմբերին «Բեյզ Մեթրլս» ՍՊԸ-ն վերակազմավորվեց «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ի:

Ընկերության իրավաբանական հասցեն է. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ. 35ա:

Ընկերության հիմնական գործունեությունը պղինձ-ոսկու հանքաքարի արդյունահանումն ու դրանից խտանյութի ստացումն է: Խտանյութի միակ գնորդը Հայաստանի Հանրապետությունում գրանցված, Ընկերության կապակցված կողմ հանդիսացող «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ն է: Ընկերությունը շահագործում է Դ-մբոնի պղինձի հանքը 2004թ. հուլիսի 13-ին ստորագրված Հանքանյութի տրամադրման և հետագուման լիցենզային պայմանագրի համաձայն և 2002թ. օգոստոսի 8-ին 25 տարի ժամկետով տրված թիվ 20 Շահագործման հատուկ լիցենզիայի հիման վրա:

Ընկերության միակ բաժնետեր և վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը (2010թ-ին Ընկերության միակ բաժնետեր և վերջնական վերահսկող անձն էր պրն. Վալերի Մեջլումյանը), ով իրավասու է ղեկավարել Ընկերության գործառնություններն իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ունի Ընկերությանը չպատկանող այլ ընկերություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 29-ում:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ներդրումների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող և հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- Ծանոթագրություն 15 *Հետախուզման և գնահատման ակտիվներ* – հետախուզման և գնահատման ակտիվների դասակարգում

Այն ենթադրությունների և անորոշությունների վերաբերյալ գնահատումների մասին տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 2(ե) *Հանքաքարի պաշարներ* – դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատման համար հիմք հանդիսացող հանքաքարի պաշարների գնահատում,
- Ծանոթագրություն 14 *Հիմնական միջոցներ* – արդյունքի միավորի մեթոդով մաշվածության հաշվարկներ,

- Ծանոթագրություն 14 *Հիմնական միջոցներ* – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ,
- Ծանոթագրություն 19 *Տրված փոխառություններ* – կապակցված կողմերին տրված փոխառությունների դասակարգումը ընթացիկ/ոչ ընթացիկ դասերի,
- Ծանոթագրություն 27 *Պայմանական դեպքեր* – ֆինանսական երաշխիք, շրջակա միջավայրի պահպանման և ակտիվների տեղահանման գծով պարտավորություններ:

(ե) Հանքաքարի պաշարներ

Հանքաքարի պաշարների քանակությունները գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Ընկերության վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքաքարի պաշարների գնահատումները հիմնված են հորատանցքների և այլ հանքանցքերի հանքաքարի նմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Ի լրումն, որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ միներալիզացիայի ցածր աստիճան ունեցող հանքաքարի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքի հետագա օգտագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության հանքաքարի պաշարների գնահատումների վրա:

Ընկերությունը ներկայումս շահագործում է Դրմբոնի պղնձի հանքը 2004թ. հուլիսի 13-ին ստորագրված Հանքանյութի տրամադրման և հետագոտման լիցենզային պայմանագրի համաձայն, որը հիմնված է 2002թ. օգոստոսի 8-ին 25 տարի ժամկետով տրված թիվ 20 Շահագործման հատուկ լիցենզիայի վրա: Դրմբոնի հանքի հանքաքարի պաշարները գնահատվել են ԽՍՀՄ Պաշարների պետական կոմիտեի կողմից 1991թ-ին: Կոմիտեի գնահատմամբ հանքաքարի պաշարները կազմել են 3,459 միլիոն տոննա: Ղեկավարության գնահատմամբ, եթե պահպանվի հանքաքարի արդյունահանման ներկայիս տարեկան չափը (մոտավորապես 350 տոննա), հանքաքարի պաշարները կսպառվեն 2014-2015թթ.:

2013թ-ից ղեկավարությունը պլանավորում է շահագործել մեկ այլ բաց հանք՝ Կաշենի հանքը (Ծանոթագրություն 15): Կաշենի հանքում 2009թ-ից 2012թ. իրականացված հորատման ծրագրի արդյունքների համաձայն սահմանափակ հանքային ռեսուրսները կազմել են մոտ 26.5 միլիոն տոննա՝ 0.55% պղնձի և 0.008% մոլիբդենի պարունակությամբ և թափոնները կազմել են 60.8 միլիոն տոննա: Հանքի շահագործման առաջին փուլի պլանը մշակվել է 2012թ-ին՝ Strathcona Mineral Services Limited կողմից «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համատեղ (Ընկերության կապակցված կողմ)՝ օգտակար հանածոների գնահատման և հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն: Գնահատման և շահագործման պլանի առաջին փուլը ենթադրում է 1.1 միլիոն տոննա հանքաքարի արդյունահանում մինչև 2016թ., որում պղնձի միջին պարունակությունը կկազմի 0.94% և մոլիբդենի միջին պարունակությունը՝ 0.009%: Ըստ ղեկավարության գնահատումների մինչև 2016թ. Կաշենի հանքի մոտ կկառուցվի հանքաքարի վերամշակման նոր գործարան, իսկ մինչ այդ արդյունահանված հանքաքարը կտեղափոխվի և կմշակվի Դրմբոնի հանքաքարի վերամշակման գործարանում: Մնացած պաշարների համար գնահատման և շահագործման ծրագրեր կմշակվեն այն ժամանակ, երբ շահագործման առաջին փուլը մոտենա ավարտին:

Վերը նշված գնահատումներն Ընկերությունն օգտագործում է արժեզրկումը, հանքաարդյունաբերական գույքի և Դրմբոնի հանքի շահագործման հետ անմիջական կապ ունեցող հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները և տեղանքի վերականգնման ծախսերի ժամկետները գնահատելիս:

(գ) Ներկայացման փոփոխություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը վերաներկայացրել է ընթացիկ/ոչ ընթացիկ դասերի կապակցված կողմերին տրված փոխառությունների դասակարգմանը վերաբերող համադրելի տեղեկատվությունը: Մասնավորապես, դասակարգման համար պայմանագրային պայմանների փոխարեն որպես հիմք է դիտարկվել փոխառությունների մարման ակնկալվող ձևը, որի արդյունքում 8,474,926 հազար դրամ գումարը (1 հունվարի 2010թ.՝ 6,258,676 հազար դրամ) ընթացիկ դասից վերադասակարգվել է ոչ ընթացիկի: Քանի որ փոփոխությունն ազդում է միայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վրա, շահույթը կամ վնասը չեն ենթարկվում որևէ փոփոխության:

Ղեկավարությունը գտնում է, որ ներկայացման այս ձևը թույլ է տալիս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին տրամադրել ավելի հուսալի, տեղին և օգտակար տեղեկատվություն Ընկերության ֆինանսական վիճակի և իրացվելիության վերաբերյալ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույթով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի ու արտարժույթով արտահայտված և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Վերափոխարկումներից առաջացող արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

(բ) Ֆինանսական գործիքներ

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ներդրումները, ներդրումները դուստր ընկերության սեփական կապիտալում, տրված փոխառությունները, առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերը ու ավանդները սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ֆինանսական ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ընկերությունը դասակարգում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները հետևյալ դասերի՝ փոխառություններ և դեբիտորական պարտքեր և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները (ծանոթագրություն 3 (գ) (i)):

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասակարգը ներառում է ֆինանսական ակտիվների հետևյալ դասերը՝ տրված փոխառություններ (ծանոթագրություն 19), առևտրական և այլ դեբիտորական պարտքեր (ծանոթագրություն 20) և դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (ծանոթագրություն 21):

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ընթացիկ բանկային հաշիվները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այն ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն ֆինանսական ակտիվների վերը նշված դասերում:

Չզանաչվող բաժնային արժեթղթերում Ընկերության կատարած ներդրումները դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, քանի որ այս ներդրումների համար չկա գործող շուկա և վերջերս չեն եղել այնպիսի գործարքներ, որոնք կարող են վկայություն տրամադրել իրական արժեքի մասին:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով պարունակված տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին վճարվելիք գումարները:

Մյուս բոլոր ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

(iii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ հարկումից հետո:

Արտոնյալ բաժնետոմսեր

Արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, եթե ենթակա չեն մարման, կամ ենթակա են մարման միայն Ընկերության ընտրությամբ, և շահաբաժինների վճարումը նույնպես կատարվում է Ընկերության հայեցողությամբ: Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ՝ Ընկերության բաժնետերերի հաստատումից հետո:

Արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես պարտավորություն, եթե ենթակա են մարման որոշված ամսաթվին կամ բաժնետերերի ընտրությամբ, կամ եթե շահաբաժինների վճարումը չի կատարվում բաժնետերերի հայեցողությամբ: Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են որպես տոկոսային եկամուտ շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես:

(գ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Հիմնական միջոցների սկզբնական արժեքը 2005թ. հունվարի 1-ի դրությամբ (ՖՀՄՍ-ներին անցման ամսաթիվ) որոշվել է այդ ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքի հիման վրա:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք հանդիսանում են համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում են որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ»/«Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցիչ օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցիչ մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Հիմնական միջոցների բոլոր միավորների գծով մաշվածությունը, բացառությամբ բաց հանքի գծով կապիտալացված ծախսերի, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

• շենքեր	20-40 տարի
• հանքարդյունաբերական գույք	
– բաց հանքի գծով կապիտալացված ծախսեր	արդյունքի միավորների մեթոդ
– այլ	7-12 տարի
• կառույցներ	6-17 տարի
• մեքենա-սարքավորումներ	2-7 տարի
• փոխադրամիջոցներ	3-9 տարի
• տնտեսական գույք	4-9 տարի
• այլ	2-11 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և ճշգրտվում՝ անհրաժեշտության դեպքում:

(iii) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը պահվում է վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ թե սովորական գործունեության ընթացքում վաճառքի կամ արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար: Ներդրումային գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի առանձին միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ներդրումային գույքի օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 5-20 տարի:

Երբ ներդրումային գույքի օգտագործման նպատակը փոխվում է, այնպես, որ այն վերադասակարգվում է հիմնական միջոցների, ապա վերադասակարգման ամսաթվի դրությամբ դրա իրական արժեքը դիտարկվում է որպես սկզբնական արժեք հետագա հաշվառման համար:

(iv) Հետախուզման և գնահատման ակտիվներ

Հետախուզման և գնահատման ծախսումները վերաբերում են հանքերի պոտենցիալ պաշարների հետախուզման և գնահատման ժամանակ կրած ծախսումներին ու ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են հանքերի շահագործման իրավունքի ձեռք բերման ծախսումները, երկրաբանական և գեոֆիզիկական ծախսումները, հետախուզման հորատման ծախսումները, նմուշների փորձարկման ծախսումները, նպատակահարմարության ուսումնասիրությանը նախորդող ծախսումները, մոնտաժման և արտադրական սարքավորումների գծով ծախսումներն ու հետախուզական աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

Հետաքրքրություն ներկայացնող յուրաքանչյուր տեղամասի հետախուզման և գնահատման ծախսումները կապիտալացվում ու արտացոլվում են հաջորդ ժամանակաշրջանում որպես ակտիվ՝ ստորև ներկայացված պայմաններից որևէ մեկին համապատասխանելու դեպքում.

- նման ծախսումների փոխհատուցումն ակնկալվում է հետաքրքրություն ներկայացնող տեղամասի հաջող մշակման և հետագուման կամ, որպես այլընտրանքային տարբերակ՝ վերջինիս վաճառքի միջոցով, կամ
- հետաքրքրություն ներկայացնող տեղամասում իրականացվող հետախուզման և գնահատման աշխատանքները դեռ չեն հասել այնպիսի փուլի, որը թույլ է տալիս ըստ պատշաճի գնահատել տնտեսապես փոխհատուցելի պաշարների առկայությունը կամ հակառակը, ինչպես նաև տեղամասում այլանավորվում է շարունակել կամ ապագայում իրականացնել ակտիվ և զգալի աշխատանքներ:

Հետախուզման և գնահատման ակտիվները դասակարգվում են նյութական և ոչ նյութական ակտիվների՝ ելնելով դրանց բնույթից: Հետախուզման և գնահատման ակտիվների վերը նշված դասակարգումը դադարում է, երբ բացահայտ են դառնում հանքի շահագործման տեխնիկական նպատակահարմարությունը և առևտրային կենսունակությունը:

Կոմերցիոն տեսանկյունից շահութաբեր պահուստներ հայտնաբերելիս՝ հետախուզման և գնահատման ակտիվները ստուգվում են արժեզրկման տեսանկյունից և փոխանցվում են հանքարդյունաբերական գույք:

Նախքան հանքերի շահագործման իրավունքի ձեռքբերումն իրականացվող գործունեությունը համարվում է նախահետախուզություն: Նախահետախուզության գծով ծախսումները ծախսագրվում են և ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են ծրագրի սկզբնական տեխնիկական ու տնտեսական գնահատման, հանքաքարի երկրաբանական մոդելի սահմանման և գնահատման, հետախուզությանը նախորդող աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

(դ) Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալությունը և վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(ե) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(գ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերի) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, տնտեսական պայմանները, որոնք կապված են ձախողումների կամ արժեթղթի համար գործող շուկայի վերացման հետ: Ի լրումն, բաժնային արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում դրանց իրական արժեքի զգալի կամ երկարաձգված նվազումը սկզբնական արժեքից:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի փոխառությունները և դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի փոխառությունները և դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Փոխառությունները և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով փոխառությունները և դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասը ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում՝ փոխառությունների և դեբիտորական պարտքերի դիմաց: Ընկերությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթի կամ վնասի՝ վերադասակարգելով սեփական կապիտալում իրական արժեքի գծով պահուստում կուտակված վնասը: Սեփական կապիտալից շահույթ կամ վնաս վերադասակարգված կուտակային վնասն իրենից ներկայացնում է ձեռքբերման արժեքի (հանած մայր գումարի մարումները և ամորտիզացիան) և ներկա իրական արժեքի (հանած շահույթում կամ վնասում նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը) տարբերությունը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմանը վերագրելի արժեզրկման պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղկացուցիչ: Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն ավելանում է, և այդ աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորուստը ճանաչելուց հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է՝ հակադարձման գումարը ճանաչելով շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքի հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնք չեն կարող ստուգվել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք, շարունակական օգտագործումից, առաջացնում են այլ ակտիվների կամ դրամաստեղծ միավորների դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը նվազեցնում է դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) այլ ակտիվների հաշվեկշռային արժեքը համամասնական հիմունքով:

Հետագոտման և գնահատման ակտիվների համար ստորև ներկայացված փաստերն ու հանգամանքները վկայում են վերջիններս արժեզրկման տեսանկյունից ստուգելու անհրաժեշտության մասին.

- այն ժամանակահատվածը, որի ընթացքում Ընկերությունն իրավունք ունի շահագործել առանձին տեղամասը, լրացել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ կլրանա մոտ ապագայում՝ առանց երկարաձգման ակնկալիքի,
- առանձին տեղամասում հանքաքարի հետագա հետախուզման և գնահատման հետ կապված էական ծախսումները բյուջեով նախատեսված ու պլանավորված չեն,
- առանձին տեղամասում հանքաքարի հետախուզումը և գնահատումը չի հանգեցրել կոմերցիոն տեսանկյունից կենսունակ քանակությամբ հանքային ռեսուրսների

հայտնաբերմանը, և Ընկերությունը որոշել է դադարեցնել այս գործունեությունն առանձին տեղամասում, ինչպես նաև

- առկա է բավարար տեղեկատվություն առ այն, որ թեև մշակման աշխատանքներն ըստ երևույթի կշարունակվեն առանձին տեղամասում, այնուամենայնիվ, հետախուզման և գնահատման ակտիվների հաշվեկշռային արժեքի ամբողջական փոխհատուցումը հաջող մշակման կամ վաճառքի միջոցով քիչ հավանական է:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ե) Աշխատակիցների հատուցումներ

(i) Կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարների կամ շահույթի բաշխման պլանների համաձայն, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

Ընկերությունը հատկացումներ է կատարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կենսաթոշակային հիմնադրամին հօգուտ իր աշխատակիցների: Այդ հատկացումները ծախսագրվում են կատարվելու ժամանակաշրջանում:

(ը) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Չեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(i) Տեղանքի վերականգնում

Ընկերության բնապահպանության քաղաքականության և կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն աղտոտված հողատարածքի գծով տեղանքի վերականգնման պահուստ և համապատասխան ծախս է ճանաչվում հողատարածքը աղտոտելիս:

(ii) Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Ընկերությանը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորության սկզբանական ճանաչումը կատարվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է հետևյալ մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը ճանաչվում է, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

(թ) Հասույթ

Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է հանդիչ վկայության առկայության դեպքում, սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման ժամկետը կախված է առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից: Փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը ստացվում է հաճախորդի պահեստում:

Ընկերության պղնձի-ոսկու խտանյութի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է անհատական վաճառքի պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի նախորդ ժամանակաշրջանների գնանշված գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից, որոնք միջինացված են գնանշման որոշակի ապագա ժամանակաշրջանի համար: Որպես կանոն, գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև չորս ամիս՝ գնորդին ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերը և հատույցները փոխանցելուց հետո:

Գ-նային ճշգրտումները հաշվառվում են որպես ճշգրտող հետագա դեպք, հիմք ընդունելով շուկայական գները՝ ըստ համապատասխան պայմանագրային կողմերի հետ համաձայնության:

(ժ) Այլ ծախսեր

(i) Վարձակալության գծով վճարներ

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ii) Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Ընկերության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Ընկերության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(ի) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և շահաբաժինների տեսքով եկամուտը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ամսաթվին, երբ հաստատվում է վճարումը ստանալու Ընկերության իրավունքը, որը գնանշվող արժեթղթերի համար որպես կանոն համարվում է «առանց շահաբաժինների» ամսաթիվը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը և որպես պարտավորություններ դասակարգված արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները:

Որակավորված ակտիվների ձեռք բերմանը, կառուցմանը կամ արտադրության ուղղակիորեն ոչ վերագրելի փոխառության ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթի, թե զուտ վնասի:

(լ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով ակնկալվող վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով:

Հետաձգված հարկը չի ճանաչվում՝

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում կատարած ներդրումներին, այնքանով, որքանով հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ հարկերի տուգանքների և ժամկետանց վճարումների գծով տոկոսների գանձման հնարավորությունը: Ընկերությունը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Ընկերությանը փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է գնահատականը:

Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

(Խ) Ռոյալթիներ

Ռոյալթիներն իրենցից ներկայացնում են կիրառելի օրենքներով և կանոնակարգերով սահմանված ուղեցույցերի և պահանջների համաձայն հաշվարկված պետական բյուջե վճարվելիք գումարները, որոնք հիմնված են լիցենզավորված գործունեության շահութաբերության մակարդակի վրա: Ռոյալթիները հաշվարկվում են օգտագործելով դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Ռոյալթիները ճանաչվում են շահույթում կամ վնասում տարեկան կտրվածքով՝ հիմք ընդունելով գործող օրենքների և կանոնակարգերի ուղեցույցերի ու պահանջների համաձայն ճշգրտված հարկվող շահույթը:

4. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ: Ընկերությունը դեռ չի վերլուծել նոր ստանդարտների և փոփոխությունների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

- ՖՀՄՍ 9 «*Ֆինանսական գործիքներ*» ստանդարտը կգործի 2015թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրառարակվի մի քանի փուլերով, և կփոխարինի ՀՀՄՍ 39 «*Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում*» ստանդարտին: ՖՀՄՍ 9-ի առաջին մասը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2009թ. նոյեմբերին: Երկրորդ մասը, որը վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2010թ. հոկտեմբերին: Ակնկալվում է, որ ստանդարտի մնացած մասերը կիրառարակվեն 2012թ. ընթացքում: Ընկերությունը ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ այդ փոփոխություններն էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը գուզրնթաց: Ընկերությունը մտադիր չէ ընդունել այս ստանդարտը նախատեսված ժամկետից շուտ:
- ՖՀՄՍ 13 «*Իրական արժեքի չափում*» ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը փոխարինում է առանձին ՖՀՄՍ-ներում ընդգրկված իրական արժեքի չափման ուղեցույցները և իրենից ներկայացնում է իրական արժեքի չափման մեկ ընդհանուր ուղեցույց: Այն տրամադրում է իրական արժեքի վերանայված սահմանումը, սահմանում է իրական արժեքի չափման հիմունքները և ներկայացնում է իրական արժեքի չափման համար պահանջվող բացահայտումները: ՖՀՄՍ 13 չի ներկայացնում նոր պահանջներ ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի չափման համար և չի բացառում գործնականում կիրառվող իրական արժեքի չափմանը վերաբերող բացառությունները, որոնք ներկայումս գոյություն ունեն որոշ ստանդարտներում: Ստանդարտը կիրառվում է հեռանկարային հիմունքով, և թույլատրվում է դրա ժամկետից շուտ կիրառումը: Համադրելի տեղեկատվության բացահայտում չի պահանջվում սկզբնական կիրառմանը նախորդող ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

- ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում. Այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացում» ստանդարտի փոփոխություն: Փոփոխությունը պահանջում է, որպեսզի կազմակերպությունն այլ համապարփակ եկամտի այն միավորները, որոնք ապագայում կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի, ներկայացնի շահույթ կամ վնաս՝ չվերադասակարգվող միավորներից առանձին: Ի լրումն, այս փոփոխության համաձայն «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը» վերանվանվել է որպես «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»: Այնուամենայնիվ, թույլատրվում է այլ անվանումների օգտագործում: Փոփոխությունը պետք է կիրառվի հետադարձ հիմունքով 2012 հուլիսի 1-ից, և թույլատրվում է դրա ժամանակից շուտ կիրառումը: Չի ակնկալվում, որ փոփոխությունն էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:
- ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 20 «Մակաբացման ծախսեր բաց արդյունահանման արտադրական փուլում» կգործի 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կտրամադրի ուղեցույցներ այն կազմակերպությունների համար, որոնք իրականացնում են հետզարգացման փուլի բաց արդյունահանման գործունեություն: Մեկնաբանության համաձայն՝ արտադրական մակաբացման ծախսերը, որոնք մուտքի հնարավորություն են տալիս ապագայում արդյունահանման ենթակա հանքաքարին, կապիտալացվում են որպես ոչ ընթացիկ ակտիվներ, եթե հանքաքարի բաղադրիչը, որի համար բարելավվել է մուտքի հնարավորությունը, կարող է բացահայտվել և մուտքի բարելավված հնարավորությունից ապագա օգուտների առաջացումը հավանական է և դրանք կարելի է արժանահավատորեն չափել: Մեկնաբանությունն անդրադառնում է նաև կապիտալացված մակաբացման ծախսերի մաշվածության հաշվարկի և պաշարների ու մակաբացման գործունեության ակտիվների միջև կապիտալացված գումարների բաշխման հարցերին: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս մեկնաբանության հնարավոր ազդեցությունը:
- Բազմաթիվ «ՖՀՄՄ-ների կատարելագործումները» դիտարկվել են առանձին՝ ըստ յուրաքանչյուր ստանդարտի: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, ուժի մեջ կմտնեն 2011թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս կատարելագործումների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

5. Իրական արժեքի որոշում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունների և դեբիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Այս իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

(բ) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը, որը որոշվում է բացահայտման նպատակների համար, հաշվարկվում է հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

6. Հասույթ

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Հասույթ պղնձի-ոսկու խտանյութի վաճառքից	17,390,077	19,248,470
Հասույթ այլ արտադրանքի վաճառքից	90,384	234,284
Ընդամենը հասույթ	17,480,461	19,482,754

7. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Պղնձի-ոսկու խտանյութի վաճառքի ինքնարժեք	6,478,665	6,278,629
Այլ վաճառքի ինքնարժեք	74,976	162,898
	6,553,641	6,441,527

Պղնձի-ոսկու խտանյութի վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Նյութեր	2,092,015	2,165,764
Աշխատավարձ	2,334,679	2,029,084
Մաշվածություն և անորտիզացիա	981,335	965,751
Բնապահպանական վճար	439,266	388,166
Այլ	631,370	729,864
	6,478,665	6,278,629

8. Իրացման ծախսեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Փոխադրման ծախսեր	499,399	511,932
Ճանապարհի հարկ	188,208	188,356
Այլ	27,216	24,145
	714,823	724,433

9. Վարչական ծախսեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Աշխատավարձ	324,844	282,433
Մաշվածություն, ամորտիզացիա և պահպանման ծախսեր	44,968	43,660
Ձեռքբերման ծառայություններ	36,233	41,105
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	34,879	26,251
Տրանսպորտային ծախսեր	29,450	22,629
Վառելիքի գծով ծախսեր	22,519	16,443
Կոմունալ ծառայությունների և հաղորդակցության ծախսեր	21,607	21,678
Վարձակալություն	7,072	9,467
Անվտանգության ծառայության գծով ծախսեր	6,608	7,989
Բանկային ծառայությունների վճարներ	2,917	1,507
Այլ վարչական ծախսեր	131,069	53,887
	662,166	527,049

10. Այլ ծախսեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ռոյալթիներ	348,249	409,744
Հիմնական միջոցների դուրսգրում	445,337	192,876
Պահպանման ծախսեր	41,912	47,919
Արժեզրկումից կորուստ հետախուզման և գնահատման ակտիվների գծով	12,920	-
Այլ	115,520	119,957
	963,938	770,496

11. Աշխատակազմի գծով ծախսեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Աշխատավարձ	2,909,885	2,563,774
Հատկացումներ պետական կենսաթոշակային հիմնադրամին	436,487	417,015
	3,346,372	2,980,789

12. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով	1,583,058	450,475
Չուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից	-	164,033
Ֆինանսական եկամուտ	1,583,058	614,508
Չուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(575,266)	-
Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին վճարված շահաբաժիններ	(119,500)	(1,195,000)
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	(280,989)	(59,351)
Ֆինանսական ծախսեր	(975,755)	(1,254,351)
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական եկամուտ (ծախսեր)	607,303	(639,843)

13. Շահութահարկի գծով ծախս

Ընկերությունը շահութահարկը վճարում է հարկի 5% դրույքով (2010թ-ին՝ 5%):

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	539,642	547,774
Հետաձգված հարկի գծով օգուտ		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(17,084)	(16,124)
Ընդամենը հարկը և ծախսը	522,558	531,650

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2011թ.		2010թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ տարվա համար	8,322,550	94.1	9,723,469	94.8
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	522,558	5.9	531,650	5.2
Շահույթը՝ առանց հարկի	8,845,108	100.0	10,255,119	100.0
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	442,255	5.0	512,756	5.0
Չհարկվող և չնվազեցվող միավորներ	80,303	0.9	18,894	0.2
	522,558	5.9	531,650	5.2

14. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Հանքարդյունաբ. գույք	Կառույցներ	Մեքենա- սարք.	Փոխադրա- միջոցներ	Տնտեսակ. գույք	Այլ	Անավարտ շինարարութ.	Ընդամենը
Սկզբնական արժեք									
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	2,321,417	2,060,677	1,429,753	3,459,091	558,708	412,142	1,135,554	945,329	12,322,671
Ավելացումներ	19,274	614,253	123,139	346,763	69,891	53,029	240,114	1,476,672	2,943,135
Օտարումներ	(316)	(149,475)	(6,064)	(111,875)	(26,047)	(14,379)	(25,021)	-	(333,177)
Փոխանցումներ	1,397	-	298	1,153	-	1,580	1,244	(5,672)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	2,341,772	2,525,455	1,547,126	3,695,132	602,552	452,372	1,351,891	2,416,329	14,932,629
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	2,341,772	2,525,455	1,547,126	3,695,132	602,552	452,372	1,351,891	2,416,329	14,932,629
Ավելացումներ	8,358	355,037	301,875	1,613,309	51,401	153,561	635,901	2,621,132	5,740,574
Դուրսգրումներ/օտարումներ	-	(510,693)	(40,581)	(259,929)	(32,957)	(10,453)	(12,614)	-	(867,227)
Փոխանցումներ	(102)	-	553	240	-	(317)	(252)	(122)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	2,350,028	2,369,799	1,808,973	5,048,752	620,996	595,163	1,974,926	5,037,339	19,805,976
Մաշվածություն									
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	252,659	811,234	162,618	1,290,938	308,651	189,705	387,849	-	3,403,654
Տարվա մաշվածություն	107,860	313,224	90,337	497,957	70,178	61,168	185,684	-	1,326,408
Օտարումներ	(53)	(45,871)	(1,859)	(59,850)	(14,908)	(11,249)	(7,363)	-	(141,153)
Փոխանցումներ	(313)	-	206	(74)	-	(128)	309	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	360,153	1,078,587	251,302	1,728,971	363,921	239,496	566,479	-	4,588,909

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Հանքարդյունաբ. գույք	Կառույցներ	Մեքենա- սարք.	Փոխադրա- միջոցներ	Տնտեսակ. գույք	Այլ	Անավարտ շինարարութ.	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	360,153	1,078,587	251,302	1,728,971	363,921	239,496	566,479	-	4,588,909
Տարվա մաշվածություն	100,516	417,795	124,599	424,674	71,964	58,930	204,542	-	1,403,020
Օտարումներ	-	(194,550)	(3,331)	(115,370)	(21,783)	(1,839)	(5,647)	-	(342,520)
Փոխանցումներ	9	-	(543)	(154)	-	522	166	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	460,678	1,301,832	372,027	2,038,121	414,102	297,109	765,540	-	5,649,409
Հաշվեկշռային արժեք									
Առ 1 հունվարի 2010թ.	2,068,758	1,249,443	1,267,135	2,168,153	250,057	222,437	747,705	945,329	8,919,017
Առ 31 դեկտեմբերի 2010թ.	1,981,619	1,446,868	1,295,824	1,966,161	238,631	212,876	785,412	2,416,329	10,343,720
Առ 31 դեկտեմբերի 2011թ.	1,889,350	1,067,967	1,436,946	3,010,631	206,894	298,054	1,209,386	5,037,339	14,156,567

Հանքարդյունաբերական գույքը հիմնականում ներառում է բաց հանքը, հանքահորի բնամասը, հանքի սպասարկման համար օգտագործվող երկաթգծերը և այն գույքը, որը կարող է օգտագործվել միայն հանքում՝ պայմանավորված դրա բնույթով:

979,585 հազար դրամ (2010թ-ին՝ 963,745 հազար դրամ) գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում, 35,923 հազար դրամ (2010թ-ին՝ 33,601 հազար դրամ) գումարով՝ վարչական ծախսերի կազմում, 44,362 հազար դրամ (2010թ-ին՝ 42,430 հազար դրամ) գումարով՝ պատրաստի արտադրանքի կազմում և 343,150 հազար դրամ (2010թ-ին՝ 286,632 հազար դրամ) գումարով՝ հիմնական միջոցների կազմում:

2011թ. ընթացքում Ընկերությունը չի ունեցել հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող էական փոխառության կապիտալացված ծախսումներ (2010թ-ին նման ծախսումներ չեն եղել):

15. Հետախուզման և գնահատման ակտիվներ

հազ. դրամ	Ընդամենը
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	708,544
Ավելացումներ	844,267
Փոխանցում հանքարդյունաբերական գույք	(110,338)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	1,442,473
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	1,442,473
Ավելացումներ	1,415,699
Արժեզրկումից կորուստ	(12,920)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	2,845,252

Հետախուզման և գնահատման ակտիվներն իրենցից ներկայացնում են Լեռնային Գարաբաղի Հանրապետության տարածաշրջանում հանքանյութի ու կրաքարի փոքր հանքերի գծով կատարած ծախսումները:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը ներառում է Կաշենի հանքի 2,603,859 հազար դրամ գումարով հետախուզման և գնահատման ակտիվները (2010թ-ին՝ 1,189,102 հազար դրամ):

16. Վաճառքի համար մատչելի ներդրումներ

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ոչ ընթացիկ		
Վաճառքի համար մատչելի ներդրումներ		
Սկզբնական արժեքով չափվող		
«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ	100,895	100,895
Իրական արժեքով չափվող		
«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ	5,250	5,250
	106,145	106,145

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում են «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի չգնանշված բաժնային արժեթղթերը: Այս ներդրումների համար շուկա չի գործում, և վերջերս չեն իրականացվել այնպիսի գործառնություններ, որոնք կտրամադրեին վկայություններ դրանց իրական արժեքի մասին: Բացի այդ, գեղջված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում է իրական արժեքի մեծ տիրույթ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ: Այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ քիչ հավանական է, որ տարեվերջի դրությամբ իրական արժեքն էականորեն կտարբերվի հաշվեկշռային աժեքից:

5,250 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքը որոշվել էր դրանց գնանշված շուկայան գնի հիման վրա: Այս ներդրումները ցուցակագրված են «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում:

17. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

(ա) Ծանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
Հիմնական միջոցներ	-	-	(36,426)	(21,656)	(36,426)	(21,656)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	4,271	-	-	(27,583)	4,271	(27,583)
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	4,271	-	(36,426)	(49,239)	(32,155)	(49,239)

(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազ. դրամ	1 հունվարի 2011թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2011թ.
	Հիմնական միջոցներ	(21,656)	(14,770)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(27,583)	31,854	4,271
	(49,239)	17,084	(32,155)

հազ. դրամ	1 հունվարի 2010թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2010թ.
	Հիմնական միջոցներ	(31,399)	9,743
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(33,964)	6,381	(27,583)
	(65,363)	16,124	(49,239)

18. Պաշարներ

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Պահեստամասեր	1,864,880	1,325,712
Հումք	1,083,614	641,471
Պատրաստի արտադրանք	288,418	275,852
Անավարտ արտադրություն	303,828	226,315
	3,540,740	2,469,350

2011թ-ին հումքը, սպառողական նյութերը և պատրաստի արտադրանքի ու անավարտ արտադրության փոփոխությունները ճանաչվեցին որպես վաճառքի ինքնարժեք՝ 2,092,015 հազար դրամ գումարով (2010թ-ին՝ 2,165,764 հազար դրամ):

19. Տրված փոխառություններ

հազ. դրամ	2011թ.	2010թ.	1 հունվարի 2010թ.
Ոչ ընթացիկ			
Փոխառություններ կապակցված կողմերին	26,848,805	8,503,232	6,258,676
	26,848,805	8,503,232	6,258,676
Ընթացիկ			
Փոխառություններ կապակցված կողմերին	1,928,850	5,671,780	1,319,026
Փոխառություններ այլ կողմերին	400,000	400,000	-
	2,328,850	6,071,780	1,319,026

հազ. դրամ	Արտարժույթ	Անվանակ տոկոսադր.	Մարման տարին	31 դեկտեմբերի 2011թ.		31 դեկտեմբերի 2010թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ԱՄՆ դոլար	0%	Ցայահանջ	2,019,487	2,019,487	1,516,403	1,516,403
Գրավով չապահովված փոխառություն այլ կողմերին	ՀՀ դրամ	0%	2012	400,000	400,000	400,000	400,000
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպությանը	ՀՀ դրամ	0%	2012	11,000	11,000	14,181	14,181
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	5%	Ցայահանջ	26,738,852	26,738,852	12,625,130	12,625,130
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	5%	2012	8,316	8,316	13,546	13,546
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	ՀՀ դրամ	10%	2012	-	-	5,752	5,752
				29,177,655	29,177,655	14,575,012	14,575,012

Ղեկավարությունը կապակցված կողմերին տրված փոխառությունների ընթացիկ և ոչ ընթացիկ դասերը ներկայացնում է հիմք ընդունելով այդ փոխառությունների ակնկալվող մարման ձևը:

Ղեկավարությունը գտնում է, որ կապակցված կողմերին տրված փոխառություններն արժեզրկված չեն, քանի որ դրանք տրամադրվել են ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններին, որոնք ապահովում են դրամական միջոցների բավարար հոսքեր իրենց պարտքերը մարելու համար:

20. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր կապակցված կողմերից	227,908	2,524,503
Այլ առևտրական դեբիտորական պարտքեր	1,923	35,646
Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	1,402	3,983
Ստացվելիք ԱԱՀ	220,790	24,717
Այլ դեբիտորական պարտքեր	18,667	21,849
	470,690	2,610,698

Ընկերության ենթարկվածությունը վարկային և արտաբժույթի ռիսկերին ու առևտրական և այլ դեբիտորական պարտքերին վերաբերող արժեզրկումից կորուստները ներկայացված են ծանոթագրություն 25-ում:

21. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Բանկային հաշիվների մնացորդներ	63,919	24,429
Կանխիկը դրամարկղում	1,391	568
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	65,310	24,997

Ընկերության ենթարկվածությունը տոկոսադրույթի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 25-ում:

22. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ և արտոնյալ բաժնետոմսեր

<i>Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ</i>	Սովորական բաժնետոմսեր		Արտոնյալ բաժնետոմսեր	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
Հայտարարված բաժնետոմսեր	750,000	750,000	250,000	250,000
Անվանական արժեք	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ	1,000 դրամ
Թողարկված առ 31 դեկտեմբերի, ամբողջովին վճարված	358,500	358,500	119,500	119,500

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր

Արտոնյալ բաժնետոմսերը փոխարկելի են ըստ սեփականատիրոջ պահանջի, դասակարգվում են որպես ընթացիկ պարտավորություններ և իրենց կարգով ավելի բարձր են դասվում սովորական բաժնետոմսերից Ընկերության լիկվիդացման դեպքում: Արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս դրանց սեփականատերերին մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ առանց քվեարկելու իրավունքի, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումներ են կայացվում Ընկերության վերակազմակերպման և լիկվիդացման մասին, կամ առաջարկվում են Ընկերության կանոնադրության փոփոխություններ ու լրացումներ, որը սահմանափակում է արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ տարեկան շահաբաժիններ՝ նվազագույնը արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 100%-ի չափով և իրենց կարգով ավելի բարձր են դասվում սովորական շահաբաժիններից: Եթե սովորական բաժնետոմսերի սեփականատերերը որոշում չեն կայացնում արտոնյալ շահաբաժինների վճարման մասին կամ որոշում են չվճարել արտոնյալ շահաբաժիններ, ապա արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ստանում են որպես սովորական բաժնետոմսերի սեփականատերեր քվեարկելու իրավունք՝ մինչև շահաբաժինների վճարումը:

հազ. դրամ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	1,032,480
Հաշվեգրված շահաբաժիններ	1,195,000
Վճարված շահաբաժիններ	(200,760)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	2,026,720
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	2,026,720
Հաշվեգրված շահաբաժիններ	119,500
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	2,146,220

(բ) Ծահաբաժիններ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համաձայն բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով:

2011թ. և 2010թ. ընթացքում սովորական բաժնետոմսերի սեփականատերերի համար շահաբաժիններ չեն հայտարարվել:

23. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Ընկերության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 25-ում:

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունից	1,539,675	-
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	5,834,745	-
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերից	9,633,661	9,086,000
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններից ստացված գրավով չապահովված փոխառությունների ընթացիկ մաս	1,248,227	1,688,259
	16,716,633	10,774,259

(ա) Պարտքերի մարման պայմանները և ժամանակացույցը

Ստորև ներկայացված են փոխառությունների և վարկերի համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արտարժույթ	Անվանակ տոկոսադր.	Մարման տարին	31 դեկտեմբերի 2011թ.		31 դեկտեմբերի 2010թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով ապահովված բանկային վարկեր	ԱՄՆ դոլար	8%	2012	5,834,745	5,834,745	-	-
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերից	ԱՄՆ դոլար	0%	Յպահանջ	9,633,661	9,633,661	9,086,000	9,086,000
Գրավով չապահովված փոխառություններ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունից	ՀՀ դրամ	5%	2013	1,592,745	1,592,745	775,636	775,636
Գրավով չապահովված փոխառություններ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններից	ՀՀ դրամ	5%	Յպահանջ	1,195,157	1,195,157	912,623	912,623
				18,256,308	18,256,308	10,774,259	10,774,259

Բանկային վարկերի համար ապահովություն են հանդիսանում՝

- վերջնական վերահսկող անձին պատկանող Ընկերության սովորական բաժնետոմսերի 40%-ը,
- «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի (Ընկերության կապակցված կողմ) հողատարածքը և շենքերը:

24. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

(ա) Առևտրական կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	708,565	195,717
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	772,701	5,868
	1,481,266	201,585

(բ) Այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ստացված կանխավճարներ	1,694,089	357
Աշխատավարձ և վճարվելիք հարակից հարկեր	492,501	357,099
Վճարվելիք ռոյալթիներ	286,536	378,031
Վճարվելիք նվիրատվություն	268,112	218,092
Վճարվելիք բնապահպանական վճարներ	225,442	241,890
Վճարվելիք անհատական եկամտահարկ	205,318	196,985
Վճարվելիք ԱԱՀ	54,767	272,743
Այլ կրեդիտորական պարտքեր	54,254	101,343
	3,281,019	1,766,540

Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 25-ում:

25. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- վարկային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ռիսկերի գնահատման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Դեկլարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Դեկլարությունը պատասխանատու է նաև Ընկերության ռիսկերի կառավարման մեխանիզմի մշակման և վերահսկման համար ու կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներակայացնում Տնօրենների խորհրդին կատարած աշխատանքի վերաբերյալ: Ընկերության ռիսկերի կառավարման գործառույթը կիրառվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի նկատմամբ և դրա նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները:

(բ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականություններն Ընկերության նկատմամբ: Վարկային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացվելիք գումարների գծով:

(i) Ենթարկվածությունը վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2011թ.	2010թ.
Տրված փոխառություններ (ծնթգ. 19)	29,177,655	14,546,706
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր (ծնթգ. 20)	231,233	2,564,132
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (ծնթգ. 21)	63,919	24,429
	29,472,807	17,135,267

(ii) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Վարկային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Ընկերության հասույթի մոտ 99% (2010թ-ին՝ 98%) վերագրելի է մեկ ապակցված կողմի հետ իրականացվող վաճառքի գործարքներին:

Ընկերություն չի պահանջում ապահովություն առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Առ այսօր Ընկերությունը վնասներ չի կրել այս առևտրական և այլ դեբիտորական պարտքերից:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ պատվիրատուների տեսակների և աշխարհագրական տարածաշրջանների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2011թ.	2010թ.
Պղնձի-ոսկու խտանյութ գնող տեղացի պատվիրատու	213,630	2,514,459
Այլ արտադրանք գնող տեղացի պատվիրատու	16,201	45,690
	229,831	2,560,149

Ստորև ներկայացված է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազ. դրամ	Համախառն 31 դեկտեմբերի 2011թ.	Արժեզրկում 31 դեկտեմբերի 2011թ.	Համախառն 31 դեկտեմբերի 2010թ.	Արժեզրկում 31 դեկտեմբերի 2010թ.
	Ոչ ժամկետանց	470,690	-	2,610,698

Չարժեզրկված առևտրական դեբիտորական պարտքերի վարկային որակը

Ընկերությունը գտնում է, որ չկա անհրաժեշտություն ձևավորել արժեզրկման պահուստ ոչ ժամկետանց առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով:

(iii) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի 63,919 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (2010թ-ին՝ 24,429 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին այս ակտիվների գծով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են խոշոր հայկական բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ այս բանկերը չեն կատարի ստանձնած պարտականությունները:

(iv) Տրված փոխառություններ

Ընկերության քաղաքականության համաձայն փոխառությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերին և տրված փոխառությունների գծով գրավ չի պահաջվում (ծանոթագրություն 19):

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Ընկերության համբավը վտանգի ենթարկելու:

Որպես կանոն Ընկերությունն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները: Բացի այդ, Ընկերությունը չունի օվերդրաֆտներ:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

2011թ. հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Գրավով ապահովված բանկային վարկ	5,834,745	6,175,019	-	266,414	5,908,605	-
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերից	9,633,661	9,633,661	9,633,661	-	-	-
Գրավով չապահովված փոխառություններ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններից	2,787,902	2,941,870	1,195,157	-	72,316	1,674,397
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	1,481,266	1,481,266	-	1,481,266	-	-
Արտոնյալ բաժնետոսմերի սեփականատերերին վճարվելիք գումարներ	2,146,220	2,146,220	-	2,146,220	-	-
Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր (ծնթգ. 27 (ա))	-	9,644,250	9,644,250	-	-	-
	21,883,794	32,022,286	20,473,068	3,893,900	5,980,921	1,674,397

«Բեյզ Մեթրա» ՓԲԸ
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2010թ. հազ. դրամ	<u>Հաշվեկշռային արժեք</u>	<u>Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր</u>	<u>Ցպահանջ</u>	<u>Մինչև 2 ամիս</u>	<u>2-12 ամիս</u>
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետերերից	9,086,000	9,086,000	9,086,000	-	-
Գրավով չապահովված փոխառություններ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններից	1,688,259	1,726,244	912,622	-	813,622
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	201,585	201,585	-	201,585	-
Արտոնյալ բաժնետոսմերի սեփականատերերին վճարվելիք գումարներ	2,026,720	2,026,720	-	2,026,720	-
	13,002,564	13,040,549	9,998,622	2,228,305	813,622

(դ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արտարժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են ԱՄՆ դոլարը: Նշված գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Փոխառությունների գծով տոկոսներն արտահայտված են փոխառության արտարժույթով: Որպես կանոն փոխառություններն արտահայտվում են այն արտարժույթով, որը համապատասխանում է Ընկերության գործառնություններից առաջացող դրամական միջոցներին՝ հիմնականում ԱՄՆ դոլարին:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին՝ ելնելով պայմանական գումարներից:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարով
	արտահայտված	արտահայտված
	2011թ.	2010թ.
Ակտիվներ		
Տրված փոխառություններ	2,019,487	1,516,403
Առևտրական դեբիտորական պարտքեր	215,530	2,516,359
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,388	617
Պարտավորություններ		
Առևտրական կրեդիտորական պարտքեր	10,520	-
Վարկեր և փոխառություններ	(15,468,406)	(9,086,000)
Զուտ ենթարկվածություն	(13,220,481)	(5,052,621)

Տարվա ընթացքում կիրառվել են ստորև ներկայացված փոխարժեքները:

ՀՀ դրամով	Միջին դրույք		Միտք դրույքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
	1 ԱՄՆ դոլար	372.76	373.68	385.77

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը նախքան հարկումը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Ընկերությունը դիտարկում է որպես խելամտորեն հնարավոր հաշվետու ժամանկաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2010թ. համար, թեև խելամտորեն հնարավոր փոխարժեքի տատանումները տարբեր էին, ինչպես ներկայացված է ստորև:

հազ. դրամ	Արժևորում		Արժեզրկում	
	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2011թ.				
ԱՄՆ դոլար (10% շարժ)	-	1,322,048	-	(1,322,048)
31 դեկտեմբերի 2010թ.				
ԱՄՆ դոլար (10% շարժ)	-	505,262	-	(505,262)

(ii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկի կամ փոխառության դեպքում դեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Կառուցվածքը

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2011թ.	2010թ.
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	26,747,168	12,644,428
Ֆինանսական պարտավորություններ	(8,622,647)	(1,688,259)
	18,124,521	10,956,169

Ֆիքսված դրույքով գործիքների իրական արժեքի զգալունության վերլուծություն

Ընկերությունը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

(ե) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և իրական արժեք

(i) Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքի որոշման հիմունքները ներկայացված են ծանոթագրություն 5-ում:

(զ) Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար: Դա կարելի է իրագործել դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական միջոցների հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի, ինչպես նաև վարկերի ու փոխառությունների միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության պարտքային և սեփական կապիտալի հարաբերակցությունը հետևյալն էր.

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Ընդամենը պարտավորություններ	25,676,384	15,552,087
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(65,310)	(24,997)
Ձուտ պարտքը	25,611,074	15,527,090
Ընդամենը սեփական կապիտալ	26,209,943	17,887,393
Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	0.98	0.87

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել:

26. Կապիտալ պարտավորվածություններ

2011թ. ընթացքում Ընկերությունը կնքել 530,396 հազար դրամ գումարով հիմնական միջոցների ձեռքբերման պայմանագիր (2010թ-ին՝ նման պարտավորվածություններ չեն եղել):

27. Պայմանական դեպքեր

(a) ՎՏԲ Բանկ (Ֆրանսիա) ՍԱ երաշխիքը

2011թ. մայիսին Ընկերությունը («Երաշխավորող») երաշխավորեց իր կապակցված կողմի՝ «Արմենիան Բափրր Փրոգրամ» ՓԲԸ-ի («Փոխառու») կողմից ՎՏԲ Բանկ (Ֆրանսիա) ՍԱ («Պարտատեր») հետ կնքված 25 միլիոն ԱՄՆ դոլար գումարով վարկային պայմանագրով («Վարկային պայմանագիր») ստանձնած պարտականությունների կատարումը:

Վարկային պայմանագրի համաձայն Երաշխավորված պարտավորությունները նշանակում են բոլոր ներկա և ապագա պարտականությունները և պարտավորությունները, որոնք ցանկացած պահի Փոխառուն ունի Պարտատիրոջ հանդեպ Ֆինանսավորման փաստաթղթերի համաձայն (ներառյալ յուրաքանչյուր վարկի մայր գումարը և հաշվեգրված տոկոսները վճարելու Փոխառուի պարտականությունը)՝ յուրաքանչյուր դեպքում ներառելով Ֆինանսավորման փաստաթղթերով նախատեսված իրավունքների պաշտպանման, պահպանման և կատարման հետ կապված Պարտատիրոջ կողմից կրած բոլոր ծախսերը և վճարները:

Երաշխավորողը վերջնականորեն և անվերապահորեն՝

- երաշխավորում են Պարտատիրոջը Փոխառուի կողմից վարկային պայմանագրով ստանձնած բոլոր երաշխավորված պարտավորությունների ժամանակին և պատշաճ կատարումը:
- երաշխավորում է Պարտատիրոջը, որ եթե Փոխառուն ժամանակին չկատարի որևէ երաշխավորված պարտավորություն, Երաշխավորողն անմիջապես ըստ պահանջի կկատարի նշված երաշխավորված պարտավորությունն այնպես, ինչպես կաներ, եթե նա լիներ պարտավորությունների հիմնական կատարողը:
- որպես առաջնային պարտականություն հանձն է առնում անմիջապես ըստ պահանջի փոխահտուցել Պարտատիրոջը բոլոր այն ծախսի, վնասը կամ պարտավորությունը, որը Պարտատերը կարող է կրել, եթե Երաշխավորողի կողմից երաշխավորված որևէ պարտավորություն անիրագործելի է, անվավեր է կամ անօրինական է կամ դառնում է այդպիսին: Ծախսի, վնասի կամ պարտավորության գումարը պետք է հավասար լինի այն գումարին, որը Պարտատերն իրավասու է այլ կերպ ստանար Երաշխավորողից:

Ղեկավարությունը գտնում է, որ Վարկային պայմանագրի հետ կապված Ընկերության կողմից տրված ֆինանսական երաշխիքի իրական արժեքը էական չէ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար:

(բ) Ապահովագրություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռևս չեն կիրառվում Լեռնային Ղարաբաղում: Ընկերությունը գործարանը և սարքավորումներն ապահովագրված չեն: Ընկերությունն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության գործունեության կամ դրա տարածքում տեղի ունեցած պատահարների հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(գ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական գործերի, վարույթների և հայցերի կողմ: Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

(դ) Հարկային պարտավորվածություններ

Լեռնային Ղարաբաղի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Լեռնային Ղարաբաղի կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկլարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(ե) Շրջակա միջավայրի պահպանության

Ընկերության գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ օրենքներով և կանոնակարգերով, որոնք կառավարում են օդը և ջուրը աղտոտող նյութերի արտանետումը, վնասակար նյութերի, թափոնների և այլ թունավոր նյութերի արտադրությունը, գործածումը, պահպանումը և արտանետումը: Դեկլարության կարծիքով Ընկերության գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության պահանջներին, այդ իսկ պատճառով, Ընկերությունը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ դեկլարությունը հավանական չի համարում նման պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը Լեռնային Ղարաբաղի

Հանրապետությունում մշակման փուլում է, և օրենսդրության ու դրա մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա էական պարտավորությունների առաջացման համար:

(ե) Ակտիվների տեղահանման գծով պարտավորություններ

Ընկերությունը պահուստ չի ձևավորել ակտիվների տեղահանման և տեղանքի վերականգնման գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ դեկլարությունը հավանական չի համարում, որ նման պարտավորությունների 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ արժեքն էական ազդեցություն կունենա այս ֆինանսական հաշվետվությունների համար: Դեկլարության գնահատականը հիմնված է այն ենթադրության վրա, որ նման պարտավորություններ մոտ ապագայում չեն առաջանա:

28. Գործառնական ռիսկեր

(ա) Հանքեր

Ըստ իրենց բնույթի հանքերը ենթակա են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Ընկերության վերահսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝ (i) գրունտի և ջրի անկանխատեսելի պայմաններով և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ հայցերով, (ii) երկրաբանական խնդիրներով, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման այլ գործընթացների հետ կապված խնդիրներով, (iv) արտասովոր եղանակային կամ գործառնական պայմաններով կամ այլ ֆորս-մաժորային իրադարձություններով, (v) հանքաքարի ակնկալվողից ցածր որակով կամ վերականգնման դրույքներով, (vi) վթարներով, (vii) կառավարության կողմից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին կամ ընդհանրապես չտրամադրմամբ, (viii) դատական վարույթների արդյունքներով, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկմամբ, (ix) հետազոտման և մշակման աշխատանքների հետ կապված անորոշություններով, (x) փոխադրման ուշացումներով, (xi) աշխատանքային վիճաբանություններով, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթի ձեռքբերման անկարողությամբ, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայությամբ, (xiv) սարքավորումների և գործընթացների հետ կապված խափանումներով, որոնք պայմանավորված են գործունեության հատկորոշումների կամ ակնկալիքների հետ անհամապատասխանությամբ, (xv) անկանխատեսելի դժվարություններով՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված, և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքներով և ֆինանսական շուկայի պայմաններով:

(բ) Պղնձի գների տատանումներ

Ընկերության ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Ընկերության վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (LUF), Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Շանհայի ֆյուչերսների բորսայում (CFE): Ընկերությունը պղնձի վաճառքն իրականացնում է LUF-ում գնանշվող գներով: Պղնձի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ, (i) պղնձի պահանջարկը և առաջարկն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ինդուստրիալ արտադրության

միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնցից բոլորը կորրեկցվում են պղնձի պահանջարկի հետ, (iii) տնտեսական աճը և քաղաքական պայմանները Չինաստանում, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը և այլ խոշոր զարգացող տնտեսություններում, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) արտարժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային բնույթով: 2011թ. ընթացքում ԼՄԲ մեկ ֆունտ պղնձի սփոթ գները օրվա վերջի կտրվածքով տատանվել են 3.0-ից 4.6 ԱՄՆ դոլար՝ կազմելով առավելագույնը 4.6 ԱՄՆ դոլար մեկ ֆունտի համար 2011թ. փետրվարի 14-ի դրությամբ:

Պղնձի ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության շահույթի և դրամական միջոցների հոսքերի վրա:

(գ) Ոսկու գների տատանումներ

Ընկերության ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է նաև ոսկու գնից, որի վրա ազդեցություն ունեն Ընկերության վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Ոսկու առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի ձուլակտորների շուկայում, Տոկիոյի ապրանքային բորսայում, Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Տյուրիխի Գոլդ Փուլում: Ընկերությունը ոսկու վաճառքն իրականացնում է Լոնդոնի ձուլակտորների շուկայում գնանշվող գներով: Ոսկու գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ, (i) ոսկու պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ոսկերչական ոլորտի միտումները, որոնցից բոլորը կորրեկցվում են ոսկու պահանջարկի հետ, (iii) Հնդկաստանի և այլ ասիական երկրների տնտեսական աճը և քաղաքական պայմանները, որոնք դարձել են ոսկու աշխարհի ամենախոշոր սպառողները և այլ զարգացող տնտեսությունները, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը ոսկու և ոսկու ֆյուչերսների հետ կապված և (v) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Ոսկու շուկան բնորոշվում է փոփոխական բնույթով: 2011թ. ընթացքում Լոնդոնի ձուլակտորների շուկայի ասոցիացիայի կողմից սահմանված մեկ ունցիա ոսկու գները օրական կտրվածքով տատանվել են 810.00-ից 1,896.50 ԱՄՆ դոլար:

Ոսկու ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության շահույթի և դրամական միջոցների հոսքերի վրա:

29. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Ընկերության միակ բաժնետերը և վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Առանցքային ղեկավար անձնակազմը տնօրինում է Ընկերության հայտարարված արտոնյալ բաժնետոմսերի 2.87%-ը:

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Ստորև ներկայացված է տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ստացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում (տես՝ ծանոթագրություն 11):

հազ. դրամ	2011թ.	2010թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	100,795	79,838
Հատկացումներ պետական կենսաթոշակային հիմնադրամին	15,119	14,371
Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին վճարվելիք շահաբաժիններ	7,170	71,700
	123,084	165,909

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

(i) Հասույթ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
<i>Պղնձի-ոսկու խտանյութի վաճառք</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	17,390,074	19,248,470	(1,693,752)	2,516,812
<i>Այլ արտադրանքի վաճառք</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	35,627	71,655	227,546	7,691
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություն	1,744	1,239	-	-
<i>Մատուցված ծառայություններ</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	7,077	21,522	362	-
	17,434,522	19,342,886	(1,465,844)	2,524,503

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

(ii) Ծախսեր

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2011թ.	Գործարքի արժեքը 2010թ.	Մնացորդը 2011թ.	Մնացորդը 2010թ.
<i>Ձեռքբերված ապրանքներ և հիմնական միջոցներ</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	3,776,449	1,076,235	(1,582,377)	1,470,267
Գուստր կազմակերպություն	54,470	47,911	(2,088)	(203)
<i>Ձեռքբերված ներդրումային ձեռքբերում</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	641,180	-	768,937	-
<i>Ստացված ծառայություններ</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,714,506	90,622	-	(88,986)
	6,186,605	1,214,768	(815,528)	1,381,078

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

(iii) Փոխառություններ

հազ. դրամ	Փոխառության գումարը 2011թ.	Փոխառության գումարը 2010թ.	Մնացորդը 2011թ.	Մնացորդը 2010թ.
<i>Ստացված փոխառություններ</i>				
Բաժնետերեր	100,000	-	(9,633,661)	(9,086,000)
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,104,275	803,700	(2,787,902)	(1,688,259)
<i>Տրված փոխառություններ</i>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	(18,581,288)	(7,502,729)	28,766,655	14,160,831
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	-	-	11,000	14,181
	(17,377,013)	(6,699,029)	16,356,092	3,400,753

Ընկերության բաժնետիրոջից ստացված փոխառության գծով տոկոսներ չեն հաշվեգրվում, այն ենթակա է մարման ըստ պահանջի: Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններից ստացված փոխառությունների նկատմամբ կիրառվում է տարեկան 5% տոկոսադրույք, այս փոխառությունները ենթակա են մարման կամ ըստ պահանջի կամ 2012թ-ին և 2013թ-ին:

Ընկերության կողմից տրամադրված փոխառությունների նկատմամբ կիրառվում է տարեկան 0-10% տոկոսադրույք, և դրանք ենթակա են մարման ըստ պահանջի կամ 2012թ-ին:

(iv) Շահաբաժիններ

հազ. դրամ	Հայտարարված շահաբաժիններ	Հայտարարված շահաբաժիններ	Մնացորդը	Մնացորդը
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
Սովորական բաժնետոսմերի սեփականատերեր	-	-	248,165	248,165
Արտոնյալ բաժնետոսմերի սեփականատերեր	112,330	1,123,300	2,124,710	2,012,380

30. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2012թ. ապրիլին, ելնելով 2011 ֆինանսական տարվա արդյունքներից, Ընկերությունը հայտարարեց 10,000 դրամ գումարով շահաբաժին յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոսմի համար: